# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՄԱԱՊՁԲ-19/1-1

ք. Երևան «05» 03 2019 թ.

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Կ. Եփրեմյանի, որը գործում է -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը այսմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 953240 (ինը հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԷԵԲՊՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ<br>ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա<br>Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ<br>h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621<br>Տնօրեն<br><br>---------- Կ. ԵՓՐԵՄՅԱՆ<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | «Սմարթլայն» ՍՊԸ<br>ք.Երևան, Վարդանանց 110<br>«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 16300-7031509<br>ՀՎՀՀ 01548908<br>Հեռ. 010 558483<br>Տնօրեն՝ Տ. Ղարիբյան<br><br>----------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

Հավելված N 1
«05» 03 2019թ. կնքված
ՀՀԷԵՊՆՋԿ-Ջ-ՄԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 30197616/1 | Թուղթ Ա3 ֆորմատի | | Թուղթ Ա3 ֆորմատի, Թուղթ՝ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու, երկկողմանի պատճենման և գրասենյակային աշխատանքների համար: Ձևաչափը՝ Ա3 (297 x 420 մմ), սպիտակությունը՝ 95 %-ից ոչ պակաս, 1 մ2 մակերեսով թղթի զանգվածը՝ 80 գ, | կգ | 1200 | 48000 | 40 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 40 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 2 | 30197622/1 | Թուղթ Ա4 ֆորմատի | | Թուղթ Ա4 ֆորմատի, չկավճած թուղթ, օգտագործվում է | կգ | 880 | 440000 | 500 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 500 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ.: | | | | | | | աշխատանքայի ն օրվա ընթացքում |
| 3 | 39263200/1 | Գրասենյակայի ն գիրք, մատյան 70-200 էջ, տողանի, սպիտակ էջերով | | Գրասենյակային գիրք, մատյան գրասենյակային, 100 էջ, տողանի, սպիտակ էջերով | հատ | 800 | 128000 | 160 | ք. Երևան, Վարդանան ց փակուղի 8ա | 160 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքայի ն օրվա ընթացքում |
| 4 | 30197232/1 | Թղթապանակ, արագակար, թղթյա | | Թղթապանակ արագակար, թղթյա, Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար | հատ | 90 | 9000 | 100 | ք. Երևան, Վարդանան ց փակուղի 8ա | 100 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքայի ն օրվա ընթացքում |
| 5 | 30197233/1 | Թղթապանակ, թելով, թղթյա | | Թղթապանակ, թելով, թղթյա, Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից սինչև 1,5 մմ: | հատ | 90 | 9000 | 100 | ք. Երևան, Վարդանան ց փակուղի 8ա | 100 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքայի ն օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 30197321/1 | Կարիչ, մինչև 20 թերթի համար | | Գրասենյակային կարիչ մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար | հատ | 780 | 6240 | 8 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 8 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 7 | 30197322/1 | Կարիչ 20-50 թերթի համար | | Գրասենյակային կարիչ, 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար | հատ | 1550 | 7750 | 5 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 5 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 8 | 30197100/1 | Կարիչի մետաղալարե կապեր, մեծ | | Կարիչի մետաղալարե կապեր, մեծ N23/15 | տուփ | 600 | 1800 | 3 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 3 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 9 | 30197100/2 | Կարիչի մետաղալարե կապեր, մեծ | | Կարիչի մետաղալարե կապեր, մեծ N23/8 | տուփ | 600 | 3000 | 5 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 5 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 10 | 301977111/1 | Կարիչի մետաղալարե կապեր, փոքր | | Կարիչի մետաղալարե կապեր, փոքր N10 | տուփ | 80 | 6400 | 80 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 80 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | 301977112/1 | Կարիչի մետաղալարե կապեր, միջին | | Կարիչի մետաղալարե կապեր, միջին N24/6 | տուփ | 190 | 13300 | 70 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 70 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 12 | 30197231/1 | Պոլիմերային թաղանթ, ֆայլ | | Ֆայլ, Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A-4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն, 50 միկրոն: | հատ | 10 | 12000 | 1200 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 1200 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 13 | 30192100/1 | Ռետին, հասարակ | | Ռետին, հասարակ, նախատեսված մատիտով գրվածքները ջնջելու համար: Faber Castell, սպիտակ գույն | հատ | 80 | 2400 | 30 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 30 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 14 | 39263530/1 | Սեղմակ, մեծ | | Սեղմակ (մեծ), մետաղական, լայնությունը 50 մմ | հատ | 80 | 8000 | 100 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 100 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 15 | 39263520/1 | Սեղմակ, միջին | | Սեղմակ (միջին) մետաղական, լայնությունը 32 մմ | հատ | 50 | 5000 | 100 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 100 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | 39263510/1 | Սեղմակ, փոքր | | Սեղմակ (փոքր),մետաղական, լայնությունը 25 մմ | հատ | 30 | 3000 | 100 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 100 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 17 | 39263410/1 | Ամրակ, փոքր | | Ամրակ (մետաղյա փոքր), գրասենյակային ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ | տուփ | 280 | 2800 | 10 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 10 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 18 | 39263420/1 | Ամրակ, մեծ | | Ամրակ (մետաղյա մեծ), գրասենյակային ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, 50 մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ | տուփ | 440 | 6600 | 15 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 15 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 30192121/1 | Գրիչ գնդիկավոր | | Գրիչ (գնդիկավոր) կապույտ, Montex Mega կամ համարժեք 1 մմ | հատ | 90 | 14400 | 160 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 160 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 20 | 30192720/1 | գծանշիչ | | Գծանշիչ, Տափակ ծայրով, տարբեր գույնի նշումներ անելու համար | հատ | 380 | 30400 | 80 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 80 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 21 | 30192710/1 | Սոսնձամատիտ, գրասենյակային | | Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար: | հատ | 280 | 14000 | 50 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 50 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 22 | 30192131/1 | Մեխանիկական կամ սրվող մատիտներ | | Մատիտ (գրաֆիտե միջուկով, հասարակ), HB կարծրությամբ | հատ | 80 | 5600 | 70 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 70 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 23 | 39241141/1 | Դանակ, գրասենյակային, մետաղյա | | Գրասենյակային դանակ, մետաղյա: Սայրի լայնությունը 9 մմ, 18 մմ ՝ թուղթ կտրելու համար: | հատ | 380 | 11400 | 30 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 30 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 30141200/1 | Հաշվասարք, գրասենյակայի ն | | Հաշվասարք, 12 նիշանի սեղանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող | հատ | 4900 | 14700 | 3 | ք. Երևան, Վարդանան ց փակուղի 8ա | 3 8 | |
| 25 | 30197332/1 | Դակիչ միջին | | Դակիչ 30-50 թերթ դակելու համար | հատ | 4600 | 9200 | 2 | ք. Երևան, Վարդանան ց փակուղի 8ա | 2 5 | |
| 26 | 39241210/1 | Մկրատ, գրասենյակայի ն | | Մկրատ 16.2 սմ: Չժանգոտող պողպատից: | հատ | 950 | 4750 | 5 | ք. Երևան, Վարդանան ց փակուղի 8ա | 5 2 | |
| 27 | 30192210/1 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ | | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ | հատ | 640 | 6400 | 10 | ք. Երևան, Վարդանան ց փակուղի 8ա | 10 01 | |
| 28 | 30192220/1 | պ.ոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ փոքր | | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ փոքր | հատ | 110 | 2200 | 20 | ք. Երևան, Վարդանան ց փակուղի 8ա | 20 01 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | 30197234/1 | Թղթապանակ կոշտ կազմով | | Ռեգիստր, Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A5 ձևաչափի թղթերի համար : | հատ | 900 | 18000 | 20 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 20 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 30 | 30192920/1 | Ուղղիչ հեղուկներ | | Շտրիխ վրձին, Օգտագործվում է թղթի վրա (այդ թվում ֆաքսի թղթի) թանաքով կատարված սխալները ծածկելու համար: RETYPE կամ համարժեք, 20մլ | հատ | 380 | 19000 | 50 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 50 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 31 | 30192930/1 | Ուղղիչ գրիչներ | | Շտրիխ, Օգտագործվում է թղթի վրա (այդ թվում ֆաքսի թղթի) թանաքով կատարված սխալները ծածկելու համար: 5-7 գր | հատ | 370 | 18500 | 50 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 50 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 32 | 30192132/1 | լրացուցիչ գրաֆիտներ՝ մեխանիկական մատիտների համար | | Մեխանիկական մատիտի միջուկ 1մմ | հատ | 140 | 1400 | 10 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 10 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33 | 30199430/1 | թուղթ նշումների, տրցակներով | | թուղթ նշումների, տրցակներով, 100 թերթ, 76 x 101,6մմ | հատ | 580 | 17400 | 30 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 30 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 34 | 30199420/1 | թուղթ նշումների համար սոսնձվածքով | | Նշումների թերթիկ ինքնակպչուն /Թերթիկներ նշումների համար, կպչուն, 76 x 101,6մմ, 100 թերթ, դեղին/ | հատ | 460 | 13800 | 30 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 30 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 35 | 30197624/1 | թուղթ (միլիմետրային) , լայնությունը 878մմ | | թուղթ (միլիմետրային), լայնությունը 878մմ | մետր | 140 | 4200 | 30 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 30 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 36 | 30192780/1 | էջաբաժանիչ պլաստիկ | | էջաբաժանիչ պլաստիկ, 5 գույն | հատ | 370 | 1850 | 5 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 5 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 37 | 30197230/1 | թղթապանակ | | թղթապանակ ֆայլերով 70 էջ | հատ | 950 | 9500 | 10 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 10 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | 22851100/1 | արագակարներ | | պոլիէթիլենյային արագակար, կազմը թափանցիկ | հատ | 250 | 6250 | 25 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 25 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 39 | 30199230/1 | Նամակի ծրարներ Ա5 ձևաչափի | | նամակի ծրարներ A5 ձևաչափի | հատ | 30 | 18000 | 600 | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա | 600 | Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում |

**Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԷԵԲՊՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
հ/հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

---------- Կ. ԵՓՐԵՄՅԱՆ

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908
Հեռ. 010 558483
Տնօրեն՝ Տ. Ղարիբյան

---------- /ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«05» 03. 2019թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՄԱԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 1 | 30197616/1 | Թուղթ Ա3 ֆորմատի | | | | 24000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | |
| 2 | 30197622/1 | Թուղթ Ա4 ֆորմատի | | | | 220000 | 440000 | 440000 | 440000 | 440000 | 440000 | 440000 | 440000 | 440000 | 440000 | |
| 3 | 39263200/1 | Գրասենյակային գիրք, մատյան 70-200 էջ, տողանի, սպիտակ էջերով | | | | 64000 | 128000 | 128000 | 128000 | 128000 | 128000 | 128000 | 128000 | 128000 | 128000 | |
| 4 | 30197232/1 | Թղթապանակ, արագակար, թղթյա | | | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | |
| 5 | 30197233/1 | Թղթապանակ, թելով, թղթյա | | | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 | |
| 6 | 30197321/1 | Կարիչ, մինչև 20 թերթի համար | | | 6240 | 6240 | 6240 | 6240 | 6240 | 6240 | 6240 | 6240 | 6240 | 6240 | 6240 | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 30197322/1 | Կարիչ 20-50 թերթի համար | | | 7750 | 7750 | 7750 | 7750 | 7750 | 7750 | 7750 | 7750 | 7750 | 7750 | 7750 |
| 8 | 30197100/1 | Կարիչի մետաղալարե կապեր, մեծ | | | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 |
| 9 | 30197100/2 | Կարիչի մետաղալարե կապեր, մեծ | | | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 10 | 301977111/1 | Կարիչի մետաղալարե կապեր, փոքր | | | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 |
| 11 | 301977112/1 | Կարիչի մետաղալարե կապեր, միջին | | | 13300 | 13300 | 13300 | 13300 | 13300 | 13300 | 13300 | 13300 | 13300 | 13300 | 13300 |
| 12 | 30197231/1 | Պոլիմերային թաղանթ, ֆայլ | | | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 13 | 30192100/1 | Ռետին, հասարակ | | | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 14 | 39263530/1 | Սեղմակ, մեծ | | | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| 15 | 39263520/1 | Սեղմակ, միջին | | | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 16 | 39263510/1 | Սեղմակ, փոքր | | | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 17 | 39263410/1 | Ամրակ, փոքր | | | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | 39263420/1 | Ամրակ, մեծ | | | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 |
| 19 | 30192121/1 | Գրիչ գնդիկավոր | | | 14400 | 14400 | 14400 | 14400 | 14400 | 14400 | 14400 | 14400 | 14400 | 14400 | 14400 |
| 20 | 30192720/1 | գծանշիչ | | | 30400 | 30400 | 30400 | 30400 | 30400 | 30400 | 30400 | 30400 | 30400 | 30400 | 30400 |
| 21 | 30192710/1 | Սոսնձամատիտ, գրասենյակային | | | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| 22 | 30192131/1 | Մեխանիկական կամ սրվող մատիտներ | | | 5600 | 5600 | 5600 | 5600 | 5600 | 5600 | 5600 | 5600 | 5600 | 5600 | 5600 |
| 23 | 39241141/1 | Դանակ, գրասենյակային, մետաղյա | | | 11400 | 11400 | 11400 | 11400 | 11400 | 11400 | 11400 | 11400 | 11400 | 11400 | 11400 |
| 24 | 30141200/1 | Հաշվասարք, գրասենյակային | | | 14700 | 14700 | 14700 | 14700 | 14700 | 14700 | 14700 | 14700 | 14700 | 14700 | 14700 |
| 25 | 30197332/1 | Դակիչ միջին | | | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 |
| 26 | 39241210/1 | Մկրատ, գրասենյակային | | | 4750 | 4750 | 4750 | 4750 | 4750 | 4750 | 4750 | 4750 | 4750 | 4750 | 4750 |
| 27 | 30192210/1 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ | | | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 | 6400 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | 30192220/1 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ փոքր | | | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 |
| 29 | 30197234/1 | Թղթապանակ կոշտ կազմով | | | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| 30 | 30192920/1 | Ուղղիչ հեղուկներ | | | 19000 | 19000 | 19000 | 19000 | 19000 | 19000 | 19000 | 19000 | 19000 | 19000 | 19000 |
| 31 | 30192930/1 | Ուղղիչ գրիչներ | | | 18500 | 18500 | 18500 | 18500 | 18500 | 18500 | 18500 | 18500 | 18500 | 18500 | 18500 |
| 32 | 30192132/1 | լրացուցիչ գրաֆիտներ՝ մեխանիկական մատիտների համար | | | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 |
| 33 | 30199430/1 | թուղթ նշումների, տրցակներով | | | 17400 | 17400 | 17400 | 17400 | 17400 | 17400 | 17400 | 17400 | 17400 | 17400 | 17400 |
| 34 | 30199420/1 | թուղթ նշումների համար սոսնձվածքով | | | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 |
| 35 | 30197624/1 | թուղթ (միլիմետրային), լայնությունը 878մմ | | | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 | 4200 |
| 36 | 30192780/1 | էջաբաժանիչ պլաստիկ | | | 1850 | 1850 | 1850 | 1850 | 1850 | 1850 | 1850 | 1850 | 1850 | 1850 | 1850 |
| 37 | 30197230/1 | թղթապանակ | | | | 9500 | 9500 | 9500 | 9500 | 9500 | 9500 | 9500 | 9500 | 9500 | 9500 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | 22851100/1 | արագակարներ | | | | 6250 | 6250 | 6250 | 6250 | 6250 | 6250 | 6250 | 6250 | 6250 | 6250 |
| 39 | 30199230/1 | Նամակի ծրարներ Ա5 ձևաչափի | | | | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԷԵԲՊՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
հ/հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

---------- Կ. ԵՓՐԵՄՅԱՆ

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908
Հեռ. 010 558483
Տնօրեն՝ Տ. Ղարիբյան

---

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*« 05 » 03 2019թ. կնքված*
*ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՄԱԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 05 » 03 2019 թ. կնքված*
*ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՄԱԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն